# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
## N 11/ 361 - 2014
### 01.12.2014թ. թիվ N ՇՀԾՁԲ-11/353-2014 պայմանագրի

«19» 12 2014թ. ք. Երևան

ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության լիազորված անձ Գոռ Զատիկյանի (լիազորագիր №00206/14 տրված 24.03.2014թ.), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի 7.3 կետի համաձայն Կողմերը համաձայնության են եկել 01.12.2014թ. թիվ **ՇՀԾՁԲ-11/353-2014** պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելված N2/:

2. Պայմանագրում ավելացնել նոր 1.1.1 կետ հետևյալ խմբագրությամբ.

«1.1.1 Սույն պայմանագրի 4.1.1 կետով սահմանված գումարի շրջանակներում գնում կկատարվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:»

3. Պայմանագրի 4.1.1 կետ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**4.1.1** Սույն պայմանագրի 4.1. կետում նշված գնի՝ **861 120 (ութ հարյուր վաթսունմեկ հազար հարյուր քսան)** ՀՀ դրամի, պարտավորությունները կստանձնվեն և մատակարարումներն կիրականացվեն պայմանագրի 1.1.1 կետի համաձայն:»

4. Պայմանագրի 4.2 կետի «ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը» բառերը և թվերը փոխարինել «ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը» բառերով և թվերով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է թիվ **ՇՀԾՁԲ-11/353-2014** պայմանագրի անբաժանելի մասը:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 օրինակից, յուրաքանչյուր օրինակը 1 թերթից: Սույն համաձայնագրի N 2 հավելվածը՝ բաղկացած 1 /մեկ/ թերթից հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԿԱ ԱԱԾ** | **«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ** |
| **ք.Երևան, Նալբանդյան 104** | **ք. Երևան, Ահարոնյան 2** |
| **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ** |
| **Հ/Հ 900011301067** | **Հ/հ 163004038879** |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ 02500052** |
| **Տնօրենի տեղակալ** | **Ընկերության լիազորված անձ** |
| **Ա. Հակոբյան** | **Գ. Զատիկյան** |

գր N12/2310 19.12.14

Հավելված թիվ 2
«19» 12 2014թ. կնքված
№ 11/361-2014 գնման համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Չափ-ի համարը | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը Տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | |
| 1 | Համացանց (Ինտերնետ կապ) | 8.33% | 16,66% | 25% | 33,33% | 41,66% | 50% | 58.33% | 66.66% | 75% | 83.33% | 91.66% | 100% | 100% |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: Վճարումն կիրականացվի պայմանագրի 4.2 կետի համաձայն:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԿԱ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան 104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ**
**Ա. Հակոբյան**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ**
**ք. Երևան, Ահարոնյան 2**
**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**

**Հ/հ 163004038879**
**ՀՎՀՀ 02500052**

**Ընկերության լիազորված անձ**
**Գ. Զատիկյան**